Ֆեդոսեևը, Ե. Պ. Վելիխովը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալներ **Ա. Մ. Կիրակոսյանը**, **Կ. Հ. Ղամբարյանը**, **Ռ. Զ. Սվետլովան**, ինչպես նաև ականավոր գիտնականներ, եղբայրական գիտությունների ակադեմիաների ղեկավար գործիչներ։

Վ. Հ. Համբարձումյանին ողջունեց ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար **Կ. Ս. Դեմիրճյանը**։ Նա ասաց, որ նշելով Վ. Հ. Համբարձումյանի 70-ամյակը, մենք արտահայտում ենք համաժողովրդական ճանաչումը և խորին հարգանքը այն մարդու նկատմամբ, որով իրավամբ հպարտանում ենք որպես լենինյան մեծ կուսակցության արժանավոր զավակի, որն իր մեջ խտացնում է սովետական քաղաքացու լավագույն հատկանիշները, մի գիտնականով, որի սխրանքը դարձել է XX հարյուրամյակի հանդուգն գիտական մտքի նվաճումների տարեգրության մի վառ էջը, որի անունը Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի պատկերավոր արտահայտությամբ, «սովետական և համաշխարհային գիտության երկնակամարում... շողում է որպես առաջին մեծության աստղ»։ Այնուհետև Կ. Ս. Դեմիրճյանը խոսեց սովետահայ գիտության զարգացման գործում հոբելյարի ներդրած մեծ վաստակի և նրա ակտիվ հասարակական-քաղաքական գործունեության մասին։ Վերջում նա վստահություն հայտնեց, որ Վ. Հ. Համբարձումյանն ինչպես միշտ, ակտիվորեն, ուժերի ու եռանդի, իր գիտելիքների ու տաղանդի լիակատար նվիրումով կաշխատի հանուն մեր սիրելի հայրենիքի հետագա առաջադիմության ու բարգավաճման։

Այնուհետև հոբելյարին դիմեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս **Ա. Պ. Ալեքսանդրովը**։ Նա նշեց, որ Վ. Հ. Համբարձումյանը պատկանում է այն մարտիկ գիտնականների թվին, որոնք գիտության մեջ հանդես եկան հեղափոխական գաղափարներով, խորապես ներթափանցելով հետազոտության ենթակա բնագավառները։ Ա. Պ. Ալեքսանդրովը հոբելյարին մաղթեց քաջառողջություն, նոր մեծ հաջողություններ աշխատանքում՝ ի բարօրություն սովետական գիտության և ապա նրան հանձնեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության ողջույնի ուղերձը։

Վրաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ **Ե. Կ. Խարաձեն** հրապարակեց ՎԿԿ Կենտկոմի, ՎՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների խորհրդի ողջույնի ուղերձը՝ ուղղված Վ. Հ. Համբարձումյանին։ Այնտեղ մասնավորապես ասված է, որ հոբելյարը լինելով իսկական սովետական հայրենասեր և ինտերնացիոնալիստ, հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ու եղբայրության լավագույն ավանդույթների կրող, ակտիվորեն մասնակցում է այդ հանրապետությունների գիտությունների ակադեմիաների սերտ համագործակցության հետագա ամրապնդմանը և զարգացմանը։

Եղբայրական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների անունից հոբելյարին ողջունեցին Կիրգիզական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ **Կ. Կ. Կարակեևը**, Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ **Հ. Ֆ. Սուլթանովը**, Էստոնական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ **Կ. Կ. Ռեբանեն**, Տաջիկական ՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ **Ռ. Բ. Բարաթովը**, Բելոռուսական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս **Ֆ. Ի. Ֆյոդորովը**, Ղազախական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար **Զ. Ա. Ախմեդովը**, Լենինգրադի գիտնականների անունից՝ ակադեմիկոս **Վ. Մ. Տուչկևիչը**, համամիութենական «Գիտելիք» ընկերության անունից՝ **Ն. Գ. Բասովը**։ ՀՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ **Է. Հ. Միրզաբեկյանն** ընթերցեց հանրապետության գիտությունների ակադեմիայի գիտնականների ուղերձը։

Վերջում ելույթ ունեցավ **Վ. Հ. Համբարձումյանը**։ Նա ՍՄԿԿ Կենտկոմին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, անձամբ Լ. Ի. Բրեժնևին ի սրտե խորին շնորհակալություն հայտնեց իր գիտական գործունեությունը բարձր գնահատելու համար։ Նա շնորհակալություն հայտնեց նաև ելույթ ունեցողներին և հավաստիացրեց, որ իր ուժերը, գիտելիքներն ու փորձը չի խնայի լենինյան կուսակցության իդեալներին, սովետական ժողովրդին, կոմունիզմի կառուցման մեծ գործին ծառայելու ասպարեզում։

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Սեպտեմբերի 12—18-ը տեղի ունեցավ հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին սովետական և արտասահմանյան մոտ 200 գիտնականներ։ Գիտաժողովի առաջին պլենար նիստում, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 12-ին, ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում, նրա մասնակիցներին հանրապե-

տության կառավարության անունից ողջունեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ Ա. Կիրակոսյանը: Հատկանշական է, ասաց նա, որ գիտաժողովը տեղի է ունենում այն օրերին, երբ հայ ժողովուրդը հանդիսավորությամբ նշում է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը, որը բախտորոշ նշանակություն ունեցավ մեր ժողովրդի կյանքում: Մեզ համար, այնուհետև ասաց նա, մեծ է այս գիտաժողովի ոչ միայն գիտապատմական, այլև մշակութային-հասարակական նշանակությունը: Այն վկայում է, որ այսօր Հայաստանն է հայագիտության կենտրոնը: Միաժամանակ հայագիտությունը վերելք է ապրել նաև հանրապետությունից դուրս և դրանով իսկ հայ ժողովրդի բազմադարյան պատմությունն ու հոգևոր մշակույթը դարձել են միջազգային ավելի լայն շրջանների հետաքրքրության առարկան: Հայ ժողովրդի հարուստ և բազմակողմանի մշակութային ժառանգությունը, նշեց Ա. Կիրակոսյանը, մեր կապն է սերունդների հետ, այն ամուր մշակութային պատվանդանը, որին հենվել է մեր ժողովրդի բարոյական ոգին, այն աղբյուրը, որից սնվել են մեր բարոյագաղափարական և գեղարվեստական ձգտումները: Հայ արվեստի գեղարվեստական մտածողության ամենավառ արտահայտություններից է նրա ամենաբարձր թռիչքներից մեկը՝ ճարտարապետությունը, որն իր նպաստն է բերել միջազգային ճարտարապետությանը: Այս գիտաժողովի նպատակն է, նկատեց Ա. Կիրակոսյանը, մի կողմից անցյալ արժեքների հետազոտությունը, իսկ մյուս կողմից՝ ժամանակակից այն պրոբլեմների առաջադրումը, որոնք թելադրված են արվեստի զարգացման արդի օրինաչափություններով:

Վերջում Ա. Կիրակոսյանը համոզմունք հայտնեց, որ գիտաժողովը մեծապես կնպաստի հայ արվեստի երևույթների քննությանն ու գնահատությանը, ինչպես նաև խաղաղության, փոխըմբռնողության, համագործակցության գաղափարներին:

Գիտաժողովի մասնակիցներին ՀՍՍՀ ԳԱ նախագահության անունից ողջունեց ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Նա մասնավորապես նշեց, որ հանրապետության գիտությունների ակադեմիայի նախագահությունը հայ արվեստի ուսումնասիրությունը համարում է հատուկ ուշադրության արժանի գործ: Դա անհրաժեշտ է պատմության ճիշտ ըմբռնման համար, այսօրվա արվեստի պրոբլեմների լուծման գործում միջնադարյան հայ արվեստի դերի գնահատման նոր ձևեր ու գաղափարներ առաջ քաշելու համար:

Այնուհետև ելույթ ունեցավ Միլանի պոլիտեխնիկումի պրոֆեսոր Ա. Ալպագո-Նովելոն, որն իր գործընկերների անունից շնորհակալություն հայտնեց գիտաժողովի աշխատանքին մասնակցելու ընձեռած հնարավորության համար:

Պլենար նիստում լսվեցին նաև գիտական զեկուցումներ: ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանը զեկուցեց «Հայաստանի արվեստի զարգացման անտիկ շրջանի մասին» թեմայով: Հռոմի համալսարանի պրոֆեսոր Պ. Կունեոն իր ելույթը նվիրեց միջնադարյան հայ քաղաքաշինության հարցերին, իսկ պրոֆեսոր Օ. Պոդոբեդովան (Մոսկվա) լուսաբանեց միջնադարյան գրքարվեստի պատկերագրության աղբյուրների հետ կապված որոշ հարցեր:

Այնուհետև հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին ըստ մասնաճյուղերի: Դրանք էին՝ հին Հայաստանի մշակույթը և արվեստը, միջնադարյան ճարտարապետություն, միջնադարյան արվեստ, հայ միջնադարյան մանրանկարչություն, հայ նոր և սովետական արվեստ: Մասնաճյուղերի նիստերի ընթացքում գիտաժողովի մասնակիցները կարդացին և քննարկեցին բազմաթիվ զեկուցումներ, որոնք վերաբերում էին Հայաստանի հին մշակույթին, միջնադարյան ճարտարապետությանը, կիրառական արվեստներին, մանրանկարչությանը, սովետական իշխանության տարիներին կուլտուրայի և արվեստի ասպարեզներում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումներին: Մասնաճյուղերի նիստերում ելույթ ունեցողները բերեցին բազմաթիվ հետաքրքիր փաստեր, կատարեցին նյութերի ցուցադրումներ, որոնք վկայում են հայ արվեստի փոխադարձ կապերը այլ երկրների արվեստների հետ, նրա ծանրակշիռ ավանդը համաշխարհային մշակույթի զարգացման գործում:

Ընդհանուր առմամբ գիտաժողովի պլենար նիստերում և հինգ մասնաճյուղերում նրա մասնակիցները հանդես եկան ավելի քան 160 հետաքրքիր զեկուցումներով ու հաղորդումներով, որոնք առաջացրին մտքերի աշխույժ փոխանակություն:

Գիտաժողովի մասնակիցների համար կազմակերպվեցին էքսկուրսիաներ դեպի հայկական ճարտարապետական հուշարձանները՝ Էջմիածին, Զվարթնոց, Գառնի, Գեղարդ, Հաղպատ, Սանահին, Գոշավանք, Հաղար-

ծին, Սարդարապատ և այլն: Նրանք եղան նաև հանրապետության տեսարժան վայրերում, մայրաքաղաքի թանգարաններում, պետական պատկերասրահում և Մատենադարանում:

Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ գիտաժողովի եզրափակիչ պլենար նիստում արժեքավոր զեկուցումներով հանդես եկան ճարտարապետության դոկտոր Վ. Հարությունյանը (Երևան), Ժ. Թիերին (Ֆրանսիա, Էտամպ): Նրանցից առաջինը զեկուցեց «Ժառանգականությունը հայ միջնադարյան ճարտարապետության զարգացման մեջ» թեմայով, իսկ երկրորդը խոսեց Կարսի Առաքելոց եկեղեցու քանդակների մասին:

Եզրափակման խոսքով հանդես եկավ գիտաժողովի կազմկոմիտեի նախագահի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ռ. Զարյանը: Նա կազմկոմիտեի, ՀՍՍՀ ԳԱ նախագահության անունից շնորհակալություն հայտնեց զեկուցումներով հանդես եկած գիտնականներին, նշեց նրանց մեծ ավանդը հայ արվեստի ուսումնասիրության գործում: Ռ. Զարյանը նշեց, որ գիտաժողովն աչքի ընկավ բազմազան թեմատիկայով և նոր քայլ հանդիսացավ հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի արժեքների լայն հետազոտման ու արժեքավորման ուղղությամբ:

Գիտաժողովի եզրափակիչ պլենար նիստում ելույթ ունեցան նաև Ա. Կամենսկին (Մոսկվա), Բ. Բրենտիեսը (Բեռլին) և Ա. Ալպագո-Նովելոն (Միլան): Նրանք գիտաժողովի մասնակիցների անունից շնորհակալություն հայտնեցին նրա աշխատանքը լավ կազմակերպելու համար, նշեցին, որ տարբեր երկրների հայագետների միջև հաստատված կապերը այսուհետև կզարգանան ու կամրապնդվեն, հայ մշակույթն ու արվեստը կդառնան ավելի շատ երկրների գիտնականների լայն ու խոր հետազոտության առարկա:

Դրանով հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ գիտաժողովն ավարտեց իր աշխատանքները: